

պէս և իմ արդ թղթի կտորները—սեազրութիւնն—կուլ գնացին վերահաս հրձիգութեանց և ինձանում մնացին լոկ լիշութիւններ և տպաւորութիւնքու...»

Հերովիշեալ ձեռվ նկարազրուած են 76 վանք ու եկեղեցի. այդ նկարազրութիւնների մեծամասնութեան վերջաբանն է. «...բայց արդ բոլորը մի քանի օրում ոչնչացաւ 96-ի անցքերին». կամ ավանքը 1896-ի կոտորածի օրերում թէն շատ կեանք փրկեց, բայց շատերին էլ զերեզման դարձաւ. Այդ տխուր և արիւնոտ ժամանակից զրեթէ մինչ ցներկալս թէ վանք և թէ նրա շրջակալքի հարաբնակ լալոնի գիւղերը ամալցել են իրանց բնիկներից և փոխարինել են նոցա տեղ լեռնալին քրդերը»:

Սրտամորմոք և տարազրուած հեղինակը բացադանչում է մաղաղաթալին ոճով. «Նկալ են երկինք ու երկիր. Աստուած, հրեշտակ և համալն մարդիկ որ՝ արդ սրբավայրերը հաղար ու բիւր մարդոց, լինէին դոքա հալ, թուրք, քուրդ, ասորի, Երոպացի, հանապազօրեալ մշտառատ հայ ու ջուր սերով ու կարազովն մէկ տեղանխտարաբար տուելու հիւրասիւրել էին օրերով ու շաբաթներով. Խոկ ալժմ, նոյնպէս վկալ են՝ որ շատերն ալդ սրբավայրերից զրկուած ու կողովատուած ամեն կալք ու կեանքից և շատերն խորտակուած իրանց հաստատահմն շէնքերից աւերակաց կարգն են դասուել...»:

Գիրքը, ինչպէս ասացինք արդէն, թէն դիտական արժէք չի կարող ունենալ սական արժէ կարդալ՝ իբրև մի պարզ և անպաճուն պատկեր այն դառն. ու ողբերգական իրականութեան մի մասի, որով շրջապատուած են ալսօր մեր արիւնակիցները....»

Գիրքը բաղկացած է 161 էջից և լի է անթիւ տալազրական սխալներով.

3. ՀՄՄԱԵՌԻՀԵԼ ՔԱԶ. ՆԱԶԱՐԵԱՆՑ. Ոտանաւորներ. (Երեխանների համար) 15 պատկերով. Մոսկովա 1903

գ. 50 կոպ.

Մեր նորազովն գրականութեան ամենաանհրաժեշտ մասերից մէկը, մա՞ն կական գրականութիւնը, շատ ողորմնիվ դրութեան մէջ է գտնուում թէ ըստ ծառալի և թէ

ըստ բովանդակութեան։ Մանկական ընթերցանութեան դըրքովիների կատարեալ սովէ է։ եթէ մեր փոքրիկների ձեռքը տալիս ենք երբեմն հայերէն գրքեր, դրանք էլ մեծ մասսամբ թարգմանական են և մանուկների անմիջական շրջակալքի նկարագիրը չվնալու՛ կիսով չափ անըմբանելի են մնում նըրանց համար։ Ազդ գրքովիների մեծ մասը եթէ նուն իսկ բովանդակութեան կողմից մատչելի լինէին հայ մանուկների հոգեկան աշխարհին, դարձեալ պէտք է անըմբանելի մնալին խեղճ երեխաների համար, որովհետև այնպիսի լեզուով ու ոճով են պատմուած լինում առհասարակ, որ օտար են մնում հայերէն պարզ ու անպաճործ լեզուով թոթովող և ոնիկների ու կուսիկների համար։

Խսկական մանկական գրականութիւնը պէտք է ինքնուրուն գրուածքներից բաղկացած լինի, —մեր խօսքը վերաբերում է 7—9 տարեկան մանուկների ընթերցանութեան գըրքովիներին—որովհետև փոքրիկ մանուկը լաւ ըմբռնել կարող է միան այն, ինչ որ ընտանի է իրեն, օտար, անծանօթ շըրջապատի և կեանքի նկարագիրը նա չի կարող իւրացնել, ուստի և նրա հոգու սեպիկականութիւնը չի դառնալ, նա չի հասկանալ լիովին։ Այս է պատճառն ահա, որ անհրաժեշտ է համարում մալրենի լեզուով գրուած և ինքնուրուն գրքովիները տալ փոքրիկների ձեռքը։ Տարաբաղդաբար մեր մանկական գրականութեան մէջ ինքնուրուն գրուածքների թիւն այնքան քիչ է, որ կարելի է նուն իսկ ասել՝ թէ բոլորովին չկար։ Պ. Աղաթանը դադարեց գրելուց և ալոր չկալ մէկը, որ նրա սկըսածը շարունակէ ու հարազատ, անխառն ընթերցանութեան նիւթ տալ ամենքի համար սիրելի փոքրիկ հայ երեխաներին։

Արժ. Էմմանուէլ Քահն. Նազարեանը, որ երկար ժամանակ ուսուցչութեամբ է պարապել և լաւտնի է իրեւ հեղինակ հայերէն դասագրքերի, չէ մոռացել հայ մանուկներին և նորես հարաբարակել է «Ուտան աւո որ ներ— երեխաների համարո անունով մի պատկերազարդ գրքով», 72 էջից բաղկացած։

Մենք ցալմէ չէինք լսել Արժ. հօր բանաստեղծական ձիրքի մասին, ուստի հետաքրքրութեամբ բաց արինք գրքուէը, բայց հենց առաջին երեսի վրալ կարդացինք հեղինակի «Երկու խօսքը», ուր ասուած է։ «Աչքի առաջ ունենալով այն

հանգամմանքը, որ լանգաւոր դրուածքները աւելի սիրով են կարդացւում, քան անլանգները՝ ևս, իբրև փորձ՝ վճռեցի մի երկու ոտանաւոր դրել; «առաջնորդ, սակայն, մեր բանաստեղծների շարքը խտացնելու լաւակնութիւն ունենալու»:

Ուրիմ ընթերցողը ոչ թէ բանաստեղծութիւն պէտք է կարդալ զրքովի մէջ, ալլ առաջնաւորը՝ կամ պահպանը դրուածք»:

Հարկաւ իբրև բացարձակ ճշմարտութիւն չի կարելի ընդունել, առոր լանգաւոր դրուածքներն աւելի սիրով են կարդացւում, քան անլանգները, որովհետեւ «սիրով» կարդալու անհրաժեշտ պարմանը լանդը չէ, ալլ նիւթի հետաքրքրական և հասկանալի լինելը»:

Ոտանաւորները բաժանուած են երկու մասի. ա. կարդալու բալու բաներ (16 հատուած) և բ. դրելու կանոններ (5 հատ.)։

Թէպէտ և շափահասներին համար խորթ զաղափար է առանց բանաստեղծութեան ոտանաւորը, բայց և ալնպէտ ալս զրքովից կարող են օգտուել մեր մանուլիները և մի քանի ոտանաւորները նոյն խոկ հաճութեամբ կարդալ ու միտները պահել։

Կան հատուածներ, որ պարզ են և ըմբռնելի փոքրիկների համար, ալս տեսակիտից հէնց առաջին ոտանաւորը «Սիրած-չսիրած բաներ» կարելի է լաջող համարել—

«Ես սիրում եմ լուս արե,

Որ վառվում է իմ վերե,

Նա է տալիս աչքիս լուս,

Տալիս է ե կեանքի լուս».

Մանկան համար լաւ պատկերացումն է առաջին Յ տողը, իսկ չորրորդը անհասկանալի նրա համար ու երկար բացատրութիւնների կարօտ։

Յաջող չի կարելի համարել «Որ ամսին ինչ տօն ունենք», որի վերջին տունը հետեւալն է։

«Սեպտեմբերը՝ կոլսի ծնունդ,

Հոկտեմբերը չունի սերունդ (?)

Նոյեմբերը՝ կոլս ընծալում

Երեք ամաց՝ սուրբ տաճարում»։

«Մեր մեծ տօները» երկար ոտանաւորի մէջ լաջող հա-

առւածներ կան, սակալն ալստեղ կալ նաև բանաստեղը՝  
ծութիւն և բանաստեղը «մեռելի ոտու գլխումը  
ածէր, տիրացու» է կանգնեցում. արդ բաւական չէ, բանաս-  
տեղը մեռելին խնդրում է և աղօթել.

«Հարուստ մեռի ոտու գլխում  
Տէր, տիրացու, ուրախ կանգնած՝  
Սուրբ երգերն են կըլ-կըլացնում՝  
Ղարիբ մեռել անտէր թողած,

Ղարիբ մեռել, հողիդ զուրբան,  
Աղօթք արա, ես մեծանամ.  
Մուշից, Վանից—ինչ մեռել կան՝  
Գերեզմաննիդ օրհնել պիտ տամ».

«Իմ աղօթքը» արդէն շատ չոր ու ցամաք աղօթք է.

«Մեր հայր, որ էն բարձրումն ես,  
Մենք մրտել, զու մրտել ես.  
Ինչ որ ուզենք, խնդրենք Քեզ՝  
Դու ամէն բան հասցրու մեղ...».

Մեծ-մալրը» լաւ տպաւորութիւն է թողնում,  
Բայց վերջին տունը շատ է կազում.

«Մի պատկեր կալ՝ մեր պատից կախ.  
Մալրս կասէ՝ «Ակ քո մեծ-մալր»:  
Երբ նարում եմ, ասում եմ «Ա՛խ,  
Ի՞նչ կը լինէր, կենպանան ալը»:

«Մեր պարտքը» բանաստեղծութիւն չէ, ալլ փիլիսոփա-  
լութիւն և այն էլ խիստ թունդ սօցիալական փիլիսոփա-  
լութիւն.

«Կարօտ մարդու ինչ տալիս ես,  
Թէ փող, թէ գործ դու քեզանից՝  
Ողորմութիւն չպէտք է կարծես,  
Ակ՝ քիչ-քիչով խլած նրանից»...»

«Հիմա, ինչ որ մենք տալիս ենք  
Խեղճի, որբի՝ մսխալներով,  
Ակն է, ինչ որ մենք խլել ենք  
Ակն թոլլերից՝ տաս փութերով».

«Մեծ-մօր օրհնանքը» սահուն է. մանուկները սիրով և  
հեշտութեամբ բերանացի կսովորեն».

Երկրորդ մասում պարունակուող սակաւաթիւ ստանա-

տրներն ուղղագրական կանոններ են պարունակում իրենց  
մէջ. քերականական կանոնները միտը պահելու կամ հեշտու-  
թեամբ լիշելու համար՝ ալս միջոցին դիմուլը շատ էին սիրում  
հին մանկավարժները. սական ալժմ արդպիսի ար հետա-  
կան լիշողութիւնից զերադաս է համարում խելացի  
լիշողութիւնը, որ հիմնում է հոգու ըմբռնման և հաս-  
կանալու կարողութիւնների վրայ. Ալդ նովատակին լարմա-  
րեցրած ոտանաւորների թերութիւններից մէկն է լինում սո-  
վորաբար՝ հատուածների մէջ տրամաքանական կազի  
թուլութիւնը, որից զերծ չէ մնացել և մեր հեղինակը.

«Մանուշակից սովորաբար

Անուշ, ախորժ հոտ է գալիս,

Մեր ցուրտ սարը ամէն ամառ

Ոչխարների հօտ է գալիս»:

«Կուրութիւնն էլ, կաղութիւնն էլ՝

Թէ մարդու մէջ կալ, արատ է.

Ալս մէկ տարին, ամենից էլ

Խոսն ու գարին շատ առատ է»:

Շատ տեղ էլ որոշ տառով գրուած բառեր շարելու հա-  
մար՝ ծիծաղելի մտքեր են կազմուած.

«Առողջ ազուա՝ լի է անտառ.

Գոռող առիւծ փշրեց մացառ»:

«Մեր պարտէզում մի առու կալ,

Արու որդիս թող անտեղ գալ»:

«Եղուց, վաղ-վաղ, լուսանալս

Եկ ու խա գնանք մեր Սուրբ Սարդիս.

Իսկ եթէ դու շուտ լը զարթես՝

Մէկ ուղտ նստիր, որ մեղ հասնեան»:

Հարկաւ ոչ ոք չէ հետաքրքրում ազաւի առողջութեա-  
մար, ոչ ոք չէ ասում թէ թող իմ արու որդին զալ.  
հալ մանուկներն ուղարկ ոչ մի տեղ չեն գնում, սակայն  
ալս զաղափարները հանդէս են բերուած, որպէս զի նման  
տառեր կամ բառեր շարուին միմեանց ետեից...»

Գրքոկը տպուած է ընտիր թղթի վրայ. պատկերներից  
մի քանիսը լաւ են, բայց ընդհանրապէս պարզ և որոշ չեն.

Ցանկակի է, որ Արժ. Նազարեանի ալս գրքոկը երկրորդ  
անգամ տպագրուէր՝ վերամշակուած և զտուած: